

**ՀԱՆՃԱՐԵՂ ԵՐԳԻԾԱԲԱՆԻ ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**  
**Ալբերտ Մակարյան, Աստղիկ Սողոյան, Հակոբ Պարոնյանը**  
մանկագիր, Եր., «Արմավ», 2021, 188 էջ\*

**Բանալի բառեր** – Հակոբ Պարոնյան, մանկագրություն, «Թատրոն. բարեկամ մանկանց», մանկական երկշաբաթաթերթ, իրապատում հեքիաթ, առակ, հրաշապատում հեքիաթ, կերպարակերտում, դաստիարակում:

Հայ գրականագիտությունը հարստացավ ևս մեկ արժեքավոր ուսումնասիրությամբ. վերջերս լույս տեսավ ուշագրավ մի մենագրություն՝ «Հակոբ Պարոնյանը մանկագիր»<sup>1</sup> խորագրով, որը հրատարակվել է Հ. Պարոնյանի մահվան 130-րդ տարելիցի առթիվ և մի յուրահատուկ հարգանքի տուրք է հայ մեծ երգիծաբանի հիշատակին:

Գրքի հեղինակներն են Հ. Պարոնյանի ստեղծագործությունների քննությանը նվիրված մի քանի մենագրությունների հեղինակ, բազմապատակ գիտնական **Ալբերտ Մակարյանը** և երիտասարդ ու խոստումնալից գրականագետ **Աստղիկ Սողոյանը**:

Մենագրությունը պարոնյանագիտության մեջ առաջին փորձն է՝ ներկայացնելու հանճարեղ երգիծաբան Հակոբ Պարոնյանին որպես մանկագրի: Առաջին անգամ են լույս քննության ենթարկվում նաև Հ. Պարոնյանի հիմնադրած առաջին մանկական պարբերականը՝ «Թատրոն. բարեկամ մանկանց» պատկերազարդ երկշաբաթաթերթը, և դրա էջերում լույս տեսած մանկագրական գրականությունը:

Ուսումնասիրությունը կազմված է չորս գլուխներից, որոնցում ներկայացվում են պարբերականի հրատարակման պատմությանն ու բովանդակությանը վերաբերող ամենատարբեր խնդիրներ: Յուրաքանչյուր խնդիր դիտարկվում է ամենալայն համապատկերում՝ հայ և այլալեզու մանկագրական գրականության, պարբերական մամուլի և մանկավարժական տեսությունների հարուստ փաստանյութի օգտագործմամբ:

\* Ընդունվել է տպագրության 14.11.2021:

1 **Մակարյան Ա., Սողոյան Ա.**, Հակոբ Պարոնյանը մանկագիր, Եր., «Արմավ», 2021, 188 էջ:

Ուսումնասիրության առաջին գլխում՝ «Հայոց մանկական առաջին պարբերականը», ներկայացվում են «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականի հրատարակման պատմությունը, անցած ուղին, նրա էջերում լույս տեսած նյութերի ժանրային կազմն ու դրանց հիմնական նպատակադրումը: Ինչպես պարզ է դառնում ուսումնասիրությունից, պարբերականում լույս տեսած նյութերը մեծ մասամբ Պարոնյանի գրչին են պատկանում, բայց երբեմն ստորագրված են տարբեր կեղծանուններով: Դրանք հիմնականում մանուկներին խրատելու և դաստիարակելու միտում են ունեցել, ուստի ճանաչողական, բարոյախրատական, կրթական, ուսուցողական և ժամանցային բնույթի են<sup>2</sup>: Ուշագրավ է հեղինակների նկատառումը Պարոնյան երգիծաբանի և մանկագրի գաղափարական խոր առնչության վերաբերյալ. «Առաջին հայացքից հակադրվելով վերջինիս (Հ. Պարոնյանի – Ն. Վ.) աշխարհընկալման դիտանկյանը՝ կոմիզմին, և չտեղավորվելով «երգիծաբան հեղինակ» տարածված սահմանման կաղապարներում՝ պարոնյանական մանկագրությունը լրացնում է պարոնյանական երգիծանքը՝ նոր շեշտադրումներ ու երանգներ տալով դրան. եթե ծիծաղը հասարակության պախարակելի կողմերի քննադատության անողոք միջոցն է, ապա հայրական լեզվով գրված խրատը դաստիարակում է ապագայի հասարակությունը՝ արմատախիլ անելով ձաղկելի կողմերը ստեղծման պահին»<sup>3</sup>: Փաստորեն, երգիծանքով ծաղրել-քննադատելը և մանուկ հասակում խրատելով առողջ հասարակություն ձևավորելը Պարոնյան գրողի ստեղծագործության առանցքային ուղղությունն են կազմում:

Մենագրության մեջ ամենայն մանրամասնությամբ քննվում է «Թատրոն. բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթում հրատարակված նյութերի ժանրային կազմը: Ուսումնասիրությունը պարզում է, որ Պարոնյան մանկագիրը նախապատվությունը տվել է իրապատում ժանրատեսակներին (իրապատում հեքիաթ, հեքիաթ-պատմվածք, պատմվածք, խրատական պատմություն և այլն)՝ ցանկանալով ընթերցող մանուկներին իրական պատկերացում տալ կյանքի մասին և չխաբել նրանց սուտ պատմություններով ու անիրական հրաշքներով: Ներկայացնելով Պարոնյանի հեղինակած իրապատում հեքիաթները՝ մենագրության հեղինակները դրանք ենթարկում են ձևաբովանդակային մանրակրկիտ քննության՝ ցույց տալով ժողովրդական հեքիաթից սերող առանձնահատուկ գծերը՝ ավանդական բանաձևեր, կառուցվածքային յուրահատկություններ և այլն: Մանրակրկիտ քննության են ենթարկվում նաև մանկական պատմվածքներն ու առակները:

Ուշագրավ նորություններ է բացահայտում մենագրության երրորդ գլուխը, որում արդեն հեղինակներն անդրադառնում են պարբերականում

2 Տե՛ս նույն տեղում, էջ 22-23:

3 Նույն տեղում, էջ 180:

լույս տեսած երկու հրաշապատում դիպաշարերին: Պարզվում է, որ նույնիսկ այս ժանրի շրջանակներում Հ. Պարոնյանը հավատարիմ է մնացել իր ռեալիստական սկզբունքներին՝ ժխտելով հրաշքն ու կախարդանքը: Այս առումով ուշագրավ է «Կարմիր գլխարկը» հանրահայտ հեքիաթի պարոնյանական մշակման՝ «Կարմիր Վարդուկը» հեքիաթի քննությանը նվիրված հատվածը: Գրախոսվող ուսումնասիրությունը բավական հանգամանալից բացահայտում է ժողովրդական ակունքներից սերած այս հեքիաթի գրական մշակման պատմությունը՝ Շառլ Պերրոյի և Գրիմ եղբայրների տարբերակները և Պարոնյանի մոտեցումն այդ հարցում: Հատկանշական է, որ Պարոնյանն իր մշակման մեջ հետևել է Պերրոյի տարբերակին, որում բացակայում է հեքիաթի երջանիկ ավարտը: Ընթերցող մանկահասակ աղջիկներին խրատելու պարոնյանական սկզբունքը այս դեպքում էլ վճռորոշ է մնում:

Հրաշքի ժխտման սկզբունքով է մշակված նաև «Կուկեսի մատանին» հեքիաթ-պատմվածքը, որի դեպքում ևս ուշագրավ քննության են ենթարկվում դիպաշարի սկզբնաղբյուրն ու գրական տարբերակները: Զուգահեռաբար դիտարկվում են պարոնյանական պատումին հիմք հանդիսացած՝ Գիգեսի մատանու մասին պատմող առասպելական սյուժեի հիշատակումները Հերոդոտոսի և Պլատոնի աշխատություններում, քննվում Պարոնյանի մշակման յուրահատկությունները, դիպաշարը մանուկ ընթերցողին հասանելի դարձնելու կերպը և դաստիարակչական ուղղվածությունը: Ինչ վերաբերում է հրաշքին, որը հետևողականորեն ժխտվում էր նույնիսկ հրաշապատում ստեղծագործություններում, ապա այդպիսի տարբեր ուսումնասիրողները ցույց են տալիս պարոնյանական մանկագրական երկերի աստվածաշնչյան մոտիվներում:

Ուսումնասիրության չորրորդ գլխում քննվում են պարբերականում լույս տեսած ստեղծագործությունների կերպարային համակարգը, Պարոնյանի մանկագրական երկերի կերպարաստեղծման սկզբունքները: Ուշագրավ է պարբերականի պատկերագրողունների և գրական երկերի գուգահեռ քննությունը, որը բացահայտում է նաև Պարոնյանի՝ սեռային սկզբունքով պայմանավորված դաստիարակչական մոտեցումը: Տղա և աղջիկ ընթերցողները երկշաբաթաթերթի էջերից պետք է քաղեին իրենց սեռին ուղղված գաղափարները, դաստիարակության սկզբունքները: Որոշակի է նաև պարբերականում տարբեր տարիքի ընթերցողներին ուղղված նյութերի առկայությունը, որոնցում դարձյալ ի հայտ են գալիս Պարոնյան մանկավարժն ու խրատատուն:

Ուսումնասիրության մեծագույն առավելություններից մեկը արծարծվող հարցերի վերաբերյալ գիտական հարուստ գրականության օգտագործումն է: Եթե հեքիաթների մշակումներին անդրադառնալիս ուսումնասիրողները հղում են օտար բազմաթիվ աղբյուրներ, ապա մանկագրական

գրականության առնչությամբ օգտագործվում են մանկավարժական և մանկական գրականության տեսությունը վերաբերող ուսումնասիրություններ: Այս առումով հետազոտությունը դուրս է գալիս նեղ շրջանակներից և ձեռք բերում ընդհանրապես մանկագրական գրականության սկզբունքները ներկայացնող ուսումնասիրության նշանակություն:

Ի դեպ, գրքին առանձնահատուկ հմայք է հաղորդում Ա. Մակարյանի որդու՝ երիտասարդ և շնորհալի արվեստագետ **Արման Մակարյանի՝** հեքիաթային մոտիվներով ձևավորած շապիկը:

Մենագրությունը նոր և թարմ խոսք է պարոնյանագիտության մեջ, այն բացահայտում է Հակոբ Պարոնյանի մանկագրական հարուստ ժառանգության առանձնահատկությունները: Գիրքը վստահաբար օգտակար կլինի գրականագետների, գրականության տեսաբանների և բանասիրությամբ ու մանկական գրականությամբ հետաքրքրված ընթերցող լայն շրջանակների համար:

**Նվարդ Խ. Վարդանյան**  
*Բանասիր. գիտ. թեկնածու*

**Նվարդ Խ. Վարդանյան** – ունի ավելի քան 40 տպագրված գիտական հոդված, մենագրություններ և այլ գիտական աշխատություններ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ժողովրդական բանահյուսությունը, հեքիաթները և մանկագրությունը, ժողովրդական քնարերգությունը, բանահյուսություն–գրականություն առնչությունները:

Էլ. հասցե՝ vardanyan.nvard@ysu.am

Summary

## **THE CHILDREN'S LITERATURE OF THE GIFTED SATIRIST**

**Albert Makaryan, Astghik Soghoyan, Hakob Paronyan** as a children's writer, Yerevan, "Arnav", 2021, 188 pages

**Nvard Kh. Vardanyan**  
*Candidate of Philological Sciences*

**Key words** - Hakob Paronyan, children's literature, "Theater: Friend to Children", a biweekly magazine, realistic tale, fable, fairy tale, upbringing.

Armenian literary criticism is enriched with a valuable study. Most recently, a remarkable monograph entitled "Hakob Paronyan as a children's writer" was

published. The authors of the book are well-deserved scientists - Albert Makaryan, the author of several monographs dedicated to the examination of H.Paronyan's works and Astghik Soghoyan.

The monograph is the first complete attempt to present the great Armenian satirist Hakob Paronyan as a children's writer. For the first time, the children's periodical founded by Paronyan, that is, the illustrated bi-weekly magazine "Theater: Friend to Children" and the children's literature published in its pages are studied.

In the four chapters of the book the history of the publication of the periodical is examined, the genres of children's literature are studied. The study clarifies that all the materials published in the periodical are entirely Paronyan's creations though they are signed by different pen-names. They were mainly intended to admonish and instruct the children, so the themes are of cognitive, morally philosophical, educational, instructive and pastime nature.

It is obvious that as children's writer Paronyan preferred realistic genres (realistic tale, tale-story, story, instructive stories and etc.) wishing to present to the little reader the real notion of life and not to deceive them by false stories and unreal miracles. This principal is seen in elaborations of two fairy tales. For instance, the tale "Red Varduk" has no happy end, which mostly underlines its instructive nature. The authors of the study have also turned to the unique approaches to education conditioned by gender.

The monograph is a new and fresh word in the field of Paronyans' study: it will surely be useful for the specialists in literature, literary theorists and for the broad range of the readers interested in philology and children's literature.

## Резюме

### **ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА ВЕЛИКОГО САТИРИКА**

**Альберт Макарян, Астхик Согоян** Акоп Паронян - детский писатель, Ер., «Армав», 2021, 188 с.

Нвард Х. Варданян  
*Кандидат филол. наук*

**Ключевые слова** – Акоп Паронян, детская литература, «Театр – друг детей», двухнедельный журнал, реалистическая сказка, басня, волшебная сказка, воспитание.

Армянское литературоведение обогатилось еще одним ценным исследованием. Совсем недавно вышла в свет замечательная монография «Акоп Паронян как

детский писатель». Авторы книги – заслуженный ученый Альберт Макарян, автор ряда монографий, посвященных изучению творчества А. Пароняна, и Астхик Согоян.

Монография является первой попыткой представить великого армянского сатирика Акопа Пароняна как детского писателя. Впервые изучается детская литература, публикуемая на страницах первого детского издания, основанного А. Пароняном, – иллюстрированного двухнедельного журнала «Театр – друг детей».

В четырех главах книги подробно рассматривается история выхода журнала, жанры детской литературы и их особенности.

В результате исследования мы пришли к выводу, что почти все отраженные в журнале материалы принадлежат перу А. Пароняна, однако иногда они публиковались под разными псевдонимами. В основном, это преследовало воспитательно-нравоучительную цель, поскольку в тематическом плане все материалы имеют познавательный, нравственно-воспитательный, образовательный, обучающий, развлекательный характер.

Несомненно, Паронян как детский писатель отдавал предпочтение реалистическому жанру (реалистическая сказка, сказка-рассказ, рассказ, нравоучительный рассказ и т.п.), желая вызвать у читающих детей реальное представление о жизни и не обманывать их ложными повествованиями и нереальными чудесами. Этот принцип заметен и в обработке двух реалистических сказок. Например, в сказке «Кармир Вардук» отсутствует счастливый финал, что сильнее подчеркивает ее воспитательное значение.

Исследователи обращают внимание также на своеобразный воспитательный подход А. Пароняна в произведениях для детей с учетом их половых различий.

Монография является новым словом в пароняноведении. Несомненно, она будет полезна литературоведам, теоретикам литературы и широкому кругу читателей, интересующихся филологией и детской литературой.

## REFERENCE

1. **Makaryan A., Soghoyan A.**, Hakob Paronyanë mankagir, Yer., “Arnav”, 2021 (**In Armenian**).